

մասին, զոր կատարած է Նորին Սրբութեան ուղղութեամբ նամակով մը. ուստի գինք զըրկեց հաւատեալու համար զայս» (5):

Երկրորդ յանձնարարականին հեղինակն է նոյն ինքն Պօղոս Բիրոմալլի: 29 Դեկտեմբեր 1663 թուակիր այս գրութիւնը լատիներէն է. զայն թարգմանաբար կը ներկայացնենք:

«Ես եղբայր Պօղոս Բիրոմալլի, Արքեպիսկոպոս Նախիջեվանի, Մեծ Հայքի մէջ, ներկայ գրութեամբս կը հաւատեմ որ Գերապատիւ Տէր Ոսկան Երեւանցին, ներկայիս Եպիսկոպոս Ս. Սարգսի (Վանքին), Մեծ Հայքի մէջ, իմ առջեւ դաւանեցաւ Սուրբ Հռոմեական Եկեղեցւոյ կաթողիկէ հաւասք 1634էն ի վեր: Այս պատճառաւ, այն ժամանակէն սկսեալ, վտարանդի շրջելով ամբողջ Հայաստանէն և Թուրքիայէն մինչև Կ. Պոլիս, ինծի և ուրիշ ընկերներու հետ, կրեց բազմաթիւ հաւածանքներ և տառապանքներ: Յետոյ երկու տարի (միաց) Ռուսիոյ Լէոպոլիս քաղաքին մէջ: Այն տեղէն Հայաստան վերադառնալով 1641ին, աւելի ծանր վշտեր կրեց մինչև 1659, երբ Հայոց այժմեան Յակոբ Պատրիարքը իր դաւանական նամակն ուղարկեց Ծայրագոյն Քաղաքայապետին: Սակայն ի հեճուկս այսչափ հակա-

(5) Archivio S. C. P. F. Asia 3. Armeni di Asia, vol. 223, fol. 183: